

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07.03.2017թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 95 անդամներից 92 -ը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Ի. Առաքելյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ԶՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արարատի մարզի 2016թ. սոցիալ-տնտեսական վիճակի և մարզպետի գործունեության վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվության մասին:

/ Զեկ.՝ մարզպետի տեղակալ՝ Ա. Վարդանյան /

2. Գարնան գյուղատնտեսական, ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների և հակահեղեղային միջոցառումների կազմակերպման մասին:

/ Զեկ.՝ գյուղ. և բնապահպան.վարչ. պետ Հ.Տերտերյան /

3. Մարզի համայնքների 2016 թվականի տարեկան բյուջեների կատարման և համայնքների 2017 թվականի բյուջեների հաշվարկային ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2016 թվականի նկատմամբ:

/ Զեկ.՝ ֆինանսատնտես.վարչ.պետ Գ.Եղիազարյան /

4. 2016թ. 2-րդ կիսամյակում մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

Զեկ.՝ ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. պետ Ա. Լալայան/

1.Լսեցին՝

Արարատի մարզի 2016թ. սոցիալ-տնտեսական վիճակի և մարզպետի գործունեության վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացված հաշվետվության մասին մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանի զեկուցումը:

Արտահայտվեցին՝ մարզպետ Ա. Գրիգորյանը , համայնքների ղեկավարներ :

2.Լսեցին՝

Գարնան գյուղատնտեսական, ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների և հակահեղեղային միջոցառումների կազմակերպման մասին աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց ին՝ մարզպետ Ա. Գրիգորյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Ի. Առաքելյանը, համայնքների ղեկավարներ :

Հանձնարարվեց

գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Հ. Տերտերյանին

● ԶՕԸ-երի հետ համատեղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ 2017 թվականի գարնան գյուղատնտեսական տարին պատրաստ սկսելու համար:

3.Լսեցին՝

Մարզի համայնքների 2016 թվականի տարեկան բյուջեների կատարման համայնքների 2017 թվականի բյուջեների հաշվարկային ցուցանիշների 2016 թվականի նկատմամբ համեմատական վերլուծության վերաբերյալ աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Ա. Գրիգորյանը:

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին՝

- վերանայել 2017 թվականի համայնքների բյուջեները և ապահովել սեփական եկամուտների նկատմամբ 10% աճ՝ 2016 թվականի հետ համեմատած:

4.Լսեցին՝

2016թ. 2-րդ կիսամյակում մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանի զեկուցումը:

/կցվում է/

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին՝

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ 2016թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունները և բացթողումները սահմանված ժամկետներում վերացնելու, ինչպես նաև հետագայում դրանք բացառելու ուղղությամբ:

Նիստի վերջում ՀՀ գյուղատնտեսության նախարար Ի. Առաքելյանը ներկայացրեց նախարարության կողմից քննարկվող ծրագրերն ու առաջարկեց աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին մասնակցել գյուղատնտեսության նախարարության աշխատանքային խմբի քննարկումներին և ըստ առաջնահերթության ներկայացնել մարզի գյուղատնտեսության զարգացմանը նպաստող առաջարկություններ:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Ա. Գրիգորյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ